
ՔԱՋԱԶ, Գեղանկար, գրաֆիկա, մոնտաժ, Ե., 2004, «Գիտություն» հրատարակչություն, 176 էջ:

Ներկայիս հայ արվեստագետներից քչերը կարող են պարծենալ իրենց ստեղծագործությանը նվիրված որքան և իցե ամբողջական, ծավալուն հրատարակություններով, լինեն դրանք մենագրություններ, թե լավ կազմած պատկերագրքեր: Հատկապես ուրախալի է, երբ նման հրատարակության է արժանանում սփյուռքում ապրող և գործող մի վարպետ, որը կարիք ունի հայրենիքում ավելի լայն ճանաչվելու: Այս առումով խիստ այժմեական է գրախոսվող գիրք-ալբոմի տպագրությունը, որն արդյունք է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ու «Գիտություն» հրատարակչության համատեղ ջանքերի և զուգադիպեց արվեստագետի 80-ամյակին:

Գեղանկարիչ և գրաֆիկ Քաջազը (Քաջազունի Քեչեճյանը) համեմատաբար քիչ է հայտնի մեզանում: Ծնվել է 1924 թ., Բեյրութում (Լիբանան): Նախնական կրթությունը ստացել է տեղի Ս. Գրիգոր Լուսավորիչ ճեմարանում: Պատանեկության տարիներին ուժերը փորձել է գրականության մեջ, ստեղծել թատերական պիեսներ և գրական այլ երկեր: 1947-ին ներգաղթել է Խորհրդային Հայաստան և աշխատանքի անցել Երևանի տպարաններից մեկում՝ իբրև լուսափորագրիչ: 1950-ականների վերջերից ակտիվորեն մասնակցել է հանրապետության գեղարվեստական կյանքին, գործերը ցուցադրել ինչպես հայրենիքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս կազմակերպվող խմբային և անհատական պատկերահանդեսներում: Քաջազն անդամ է Հռոմի մշակույթի միջազգային կենտրոնի (CSSI), Փարիզի «Լյութես» և Ֆրանսիայի Նոթան-Սյուր Ռուազ գրականության և արվեստի ակադեմիաների, թղթակից անդամ՝ Հռոմի «Լեոնարդո դա Վինչի» ակադեմիայի: Արժանացել է բազմաթիվ մրցանակների, պարգևատրված է մի շարք շքանշաններով ու պատվոգրերով: Ավելի քան երեսուն տարի է, ինչ ապրում է ԱՄՆ-ում՝ սերտ կապեր պահպանելով Հայաստանի մշակույթի և մտավորականության հետ:

Կենսագրական այս և մյուս փաստերին տեղեկանում ենք գրքից, որն ամփոփում է նկարչի կյանքի ու գործունեության տարեգրությունը, նրա անհատական և խմբային ցուցահանդեսների, ինչպես նաև արվեստագետին նվիրված հրապարակումների ցանկերը: Ալբոմի հիմնական մասն են կազմում Քաջազի ավելի քան քառասնամյա ստեղծագործական ուղու ընթացքում կերտած գեղանկար և գրաֆիկական աշխատանքների ու մոնտաժայերի գունավոր և գծային վերարտադրությունները: Այդ նյութը բաժանված է հինգ մասի՝ ըստ արվեստագետի ստեղծագործության հիմնական փուլերի՝ 1958–1964, 1964–1967, 1967–1975, 1976–1991 և 1988–2002 թվականներ: Գիրքն սկսվում է արվեստաբան Շահեն Խաչատրյանի նախաբանով (անգլերեն և հայերեն), ուր տրված է Քաջազարվեստագետի ընդհանրական բնութագիրն ու գնահատականը՝

համակված հեղինակի խոր անձնական վերաբերմունքով: Քաջազի պոետիկան, պատկերային աշխարհը վերծանելու, նրա նկարչական ոճի ակունքերն ու յուրահատկությունը բացահայտելու իմաստով ուշագրավ են նրա ավագ ընկերոջ՝ մեծն Երվանդ Քոչարի երեք հոդվածները («Ստեղծագործական վերելքի ճանապարհին», «Քաջազունի Քեչեջյան (Քաջազ)», «Արվեստ ազգային ոգու հավերժացման»), որոնք ևս տեղ են գտել ալբոմում: Հեղինակներն իրավացիորեն նշում են Քաջազի պատկերագրության և նկարչական լեզվի ազգային բնույթը, թեպետ «Նրա արվեստը,– ինչպես նկատում է Քոչարը,– լինելով խորապես հայկական, խոսում է համաշխարհային արվեստի լեզվով և մտնում այդ արվեստի ընտանիքի մեջ» (էջ 31): Այս միտքն ավելի հստակ է արտահայտում նկարիչ-գրող Ուլդիս Զեմգարիսը. «Նրա (Քաջազի. – **Ա. Ա.**) պատկերման եղանակը, որ թվում է այնքան հնադարյան ու արիստիկական հասնելու չափ պարզեցված, միաժամանակ լիովին կռահել է ժամանակակից արվեստի սկզբունքները: Քաջազի գեղանկարչությունը, որն այնքան անձնականորեն «պրիմիտիվ» է ու միաժամանակ իր բնույթով բացահայտորեն հայկական, իր մեջ կրում է նաև ամբողջ աշխարհի պլաստիկ մտածողության էվոլյուցիան» (էջ 34):

Գրքում օտարալեզու մամուլից զետեղված են նաև քաղվածքներ, որոնցում արտերկրի հայտնի քննադատներն ու լրագրողները հիացմունքի ու գովեստի խոսքեր են հնչեցնում Քաջազի հասցեին: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նկարչի «Արվեստի դերը մարդկային հասարակության մեջ» վերնագրով ելույթը, որն առաջին անգամ հրապարակվել է 1982 թ., Հռոմում, Լեոնարդո դա Վինչիի ծննդյան 530-րդ հանդիսության բացմանը: Չնայած հակիրճ լինելուն՝ այն որոշակի պատկերացում է տալիս Քաջազի գեղագիտական դիրքորոշման և սկզբունքների մասին, բացի այդ՝ վկայում նրա գրական ձիրքը: Ալբոմը շատ են հարստացնում փաստաթղթերի (նամակներ, վկայականներ և այլն) վերատպություններն ու հատկապես մեծաթիվ վավերագրական լուսանկարները, որոնք Քաջազին պատկերում են թե՛ ընտանիքի անդամների, թե՛ հայ մշակույթի և հասարակական կյանքի նշանավոր դեմքերի հետ: Մարտիրոս Սարյան, Երվանդ Քոչար, Մինաս Ավետիսյան, Հարություն Գալենց, Պարույր Սևակ, Գառգու, Կոստան Զարյան. ահա մի քանիսն այն մեծերից, որոնց շրջապատում տեսնում ենք տաղանդաշատ նկարչին: Եթե այս ամենին գումարենք գրքի տպագրության բարձր որակը, ապա պարզ կդառնա, որ սա մի նախանձելի նվեր է ոչ միայն մասնագետներին, այլև արվեստասեր ընթերցողին:

Միննույն ժամանակ, բնավ ավելորդ չէր լինի, եթե գրքում ընդգրկվեր նաև պատշաճ պատկերացանկ, որը կհեշտացներ գործերի և փաստերի որոնումը: Մինչդեռ, նույնիսկ վերատպությունները համարակալված չեն, ինչը խիստ սահմանափակում է ալբոմի տեղեկատվական գործառնությունը: Նշված չէ աշխատանքների հիմնական զանգվածի գտնվելու տեղը. պետք է ենթադրել, թե դրանք նկարչի սեփականությունն են, ի տարբերություն այն գործերի, որոնց «մշտական գրանցումը» նշված է: Վերջապես, եթե գիրքը հավակնում է առնվազն երկլեզու լինելու (ասում ենք՝ առնվազն, որովհետև ալբոմում կան նաև ֆրանսերեն

հատվածներ), ապա ինչու՞ տեքստն ամբողջությամբ չի թարգմանվել: Սա վերաբերում է նաև արտերկրյան մամուլից քաղած մեջբերումներին, նաև ստեղծագործությունների տեխնիկայի մասին եղած տվյալներին: Այս և մյուս ոչ այնքան էական դիտողությունները պետք է, թերևս, հասցեագրվեն ալբոմի հեղինակ-կազմողին, եթե նրա անունը հայտնի լիներ:

Բայց և այնպես, վերը նշված մանր թերությունները չեն կարող խաթարել այս գեղեցիկ և շքեղ հատորից ստացվող լավ տպավորությունը: Կուզեինք, որ նման ձեռնարկումները մեզանում հետզհետե ավանդույթ դառնային:

ԱՎԱԳՅԱՆ Ա. Վ.

արվեստագիտության թեկնածու